Պահարանի կողքից կախված և շղթայով մի խաչ, վրան չընդավոր խաչելութիւն, խաչի վերին անկյուններում մարդկային բոլորակ դեմքով արեգակ և լուսին։

Մի տարի հետո, այսինքն 1699 թվին, անշուշտ այս Դավթի ժամանակ, թեև առանց նորա անվան հիշատակության, Առաքելի վորդի Գրիգորը Գեղրոն գյուղից նվիրում է վանքին մի ղանդակ այսպիսի արձանագրությամբ. «Յիշատակ է Գեղրոնցի Առաքելի որդի Գրիգորին ի դուռն սուրբ Գեղարդին, թուին ՌՃԽԸ»*։ Գեղրոն գյուղը գտնվում է վոչ հեռու Քանաքեռից՝ Հրազդանի ափին։

Դավթի անվան վերջին հիշատակությունն ունինք 1702 թվին. Կոտայքի Աղասար (Ղրխբուլաղ) գյուղից Ղարս վերադարձված վոմն «պարոն Միքայէլ» հիշել է տալիս յուր հայրենիքի գլխավոր վանքերի վանահայրերին՝ «խորհանց առաջնորդ Գեւորգեյ վանացն Յոհան պարոն տէրն և Գեղարդի վանաց Դաւիթ վարդապետն...»։ Նա մեռավ 1705 թվին, ինչպես ցույց է տալիս նորա գերեզմանաքարի արձանագրությունը.



Նոյան տապանի պահարանի արձանագր. Պատկեր 118.

Այս է հանգիստ Դաւիթ ածայ | բանութե վարդապետի որ է շինող ածայծինի (s!) ժամայտան կա | ռուցողի Ծ ամեայ սա վաղճանի | երգայ (s!) առտոն ամենի օվ որ տռ (տառխ) հանգեսցէ (հանդիպեսցե), լի սրտիւ ողո | րմի տայցի Թվ. ՌՃԾԴ**։

* Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանց. Գեղարքունի. 1895. 223։

** Ընդգծվածները կցումներով։

Դավթի հաջորդն էր իբրև վանահայր նորա ցեղբորորդին, վոր Հայսմավուրքի հիշատակարանի գրության ժամանակ, այսինքն 1689 թվին դեռ ևս սարկավագ էր։ Գեղարդի միաբաններից վերոհիշյալ Գանձակեցի Սիմեոն վարդապետը 1707 թվին՝ «ի թուականիս հայկայինս տոհմի ՌՃԾԶ»-ին ստացել է Կյուրեղ Աղեքսանդրացու Գանձուց և Պարապմանց մի գիրք Այլարերցի տեր Աստվածատուրի վորդի Սուքիաս չերեցի գրչությամբ, վոր թերին միայն լրացրել է Աղեքսանդր կաթողիկոսի առաջին տարին «և ի առաջնորդութե սբ ուխտին Գեղարդու տէրի և քաջ րաբունապետի Դանիէլ վրդապետին, որ է ցեղէն իշխանաց իշխան Պռօշ իշխանի, որ վերաց ի տոհմուր վայրէ առաջնութի սբ ուխտիս»։ Մի տարի հետո 1708 թվին նա թողել է մի արձանագրություն յուր կատարած շինարարության մասին.

«Թվ ՌՃԾԷ. էին շինեցաւ դարվազի մուտեսատունի վերին կողմին բրրջայ պատոխ առաջնորդ. Դանիէլյարքան վրդպին, որ է նորայբողբոջ, որ է սայ ի շառաւիղէն [Պռոշ իշխանին, որ է եղբօրորդի Դաւիթ վարդապետի]*։

Սորանով էլ վերջանում են մեր տեղեկությունները Պռոշյանց տոհմի հոգևորական վերջին շառավիղների մասին։

* Հետագա նորոգության ժամանակ փակագծի մեջ առնված արձանագրության քարը ուրիշ տեղ է հագցված։